

Հ Ա Յ Ա Ջ Գ Ն

ԵՒ ԻՒՐ ԱՌ ԲԱՐԿԿՈՒԹԻՒՆ ԸՐԱԾ ՕԳՈՒՏՆԵՐՆ

(ՏԵՄ ԼՆ. ԼԹ. 3, 87, 198, — Խ, 3, 116, 202).

ԳՂՈՒԻ Ժ.

Հայք եկրկայ Ինճեւտաներոյ դարուս շրջանիւ մէջ:

Վերջին անգամ մ'ևս բանալք, միլ պատուական վերծանողք, հին ազգաց պատմութիւնը, խառնենք անոր յարափոփոխ էջերն, և բաղդատենք զՀայ ազգն անոնց հետ, և տեսնենք. զինչ արդեաք. — Հայ ազգն միայն յետ Յուճայ՝ յաւերժացոյց իւր յաջորդութիւնն ընդ այնքան յեղափոխութիւնս իրաց և ժամանակաց, ո՛րք են արդարև Հընդիկք և Եգիպտացիք և Ելամացիք. ո՛րք են Քաղդէայիք և Ատրեստանեայք և անոնց պարմանադործութիւնք. ո՛րք Բաբելոնացիք և Իրենց անպարտելի զօրութիւնք. Մարք, և անոնց անպատմելի ճոխութիւնք. ո՛րք են հուսկ ուրեմն Հռովմայիցիք, անոնց փառաւոր ծողիւածութիւնն, քաղաքադիտութիւնն, գեղեցիկ արուեստներն, գերազանց դրակա նութիւնն և ընդարձակ աշխարհակալութիւնքն: Ամենքն ալ մի գլխի միւսոյն թաւալեցան յանիւս բաղդին, և անոնց սղօրմ մնացորդքն միայն կ'երևին այսօր: Ի զուր կը փնտուեն հնագէտք և բանասէրք զՍորհրդաւոր դրութիւնս և գլխատակարանս հինաւուրց կարեղգոնացոց. կապազովկեցոց և

Լիւդացոց և Պարթևացոց յիշատակն անգամ գողցես մեռած է: Իսկ Հոյաստան տակաւին կենդանի է ոչ միայն ՚ի յիշատակս իւր և յոնուն Հայ ազգին, այլ և յանընդհատ յայրօրութիւնս որդւոց իւրոց և ՚ի գեղեցիկ ակնկալիս նոցա: Այն հինաւուրց գրացիներէն շատերը գեռ քրիստոնէութեան նոր լոյսը չտեսած՝ անհետացան հեթանոսական խաւարի մէջ. այլ Հայ ազգն հինաւուրց և միանգամայն նոր ժողովուրդ, տեսաքրիստոնէութեան պանչելի լոյսը, ընդունեցաւ անտի իւր կենաց նոր արեւը և իւր բազմաբեղուն պտուղներովն աւանդեց ներկային գիրկն իւր պատուական նշխարքը: Ոչ ՚ի սափորի աճիւնացեալ, այլ կենդանի դեռ ևս՝ իւր սերնդոց կենդանութեան մէջ:

Հայ ազգի վարմանալի տեսողութեան բուն գաղտնիքն թէպէտ և ստուգիւ չի գիտցորի, սակայն այս հետեւեալ կէտերն մեղի հաւանական կը թուին. Ա. հայերէն լեզուն՝ իւր սեփական յատկութիւններովն, Բ. ազգային ամենահին աւանդութիւնք, որոնցմով հայ ժողովուրդն ուրիշ մի այլ ժողովրդեան գիմելու և անոր հետ խառնակելու այնքան պէտք չէր զգար: Գ. ազգային կրօնական և քաղաքական ծիսից, տրտրողութեանց գոյութիւնն յանյիշտակ ժամանակաց և անոնց յիշատակն որ

1 Սորտոնէն սկսեալ ցՆիպուր և ցՊար. Հերոզոտոնէ՝ ցՀերէն և ցՆրեհոտեր. Մատա. տիտոն ցՊոլար և ցՆիգրման, բազմութիւ լեզուաբէտք և բանասէրք հետախուզիցին զնախատարերս հայերէնի՝ զոգցես յամենայն լեզու ազգաց, որոնց հետ սերտ վերաբերութիւն ունեցաւ: Սակայն անոր մասին ծագած զԺառ. բութեամբք հանդերձ, մարթ է գարձեալ, կըսէ մտասնագիր օք, ճանաչել զոյն իրև նախ.

նական կազմութեամբն և քերականական օրինակը Հնդկա-Սլաւոնական ամենամեծ գասաւորութեան իրանական բնոյն հետ միացեալ: Այս ծանօթ գրաբառի մասին, իսկ Վանայ և Հայաստանի ուրիշ սեպանէ գրութեանց մասին, որ արհեստ կը կոչուին, բանասիրաց շատերը կը վճկային թէ բուրսովն անմասն են Եգիպտացոց, Ատրեստանեաց և Պարսից սեպանեհրոն:

միացեալ կը բռնէր զՀայն իւր հոյրե-
նական հողին վրոյ և կամ 'ի հեռուոր
օտարութեան : Գ. այն ազգին ճարպիկ
քաղաքավարութիւնն՝ որով գիտցաւ
նա ամեն ժողովրդեան և ամեն ժամա-
նակի ընթացից յարմարիլ և առաձգա-
կան ենթակայի նման ճկելով առ ժա-
մանակ մի զինքը ճնշող զօրաւոր տա-
րիւրաց ներքև, կարաց դարձեալ իւր
նախկին վիճակը ստանալ, և անկո-
րուստ պահել իւր բարեմասնութեանց
հետ նաև ազգային միութիւնը : Ե- Հայ
ժողովուրդն լերանց և միանգամայն բա-
րեխառն գօտոյ բնակիչ լինելով՝ իւր
զօրաւոր և յողթանդամ կազմուած-
քով կարող եղած է սառուցեալ և ոյ-
րեցած գօտիներու տակ անգամ օդ
շնչել և իւր սերունդը յաւերժացընել :
Զ. Հայութեան անկորուստ մնալուն վեր-
ջին պատճառ մ'ալ անոր հայրենասի-
րութիւնն եղած է : Յիբարի, հայ ազգն
եթէ գերեզմարութեամբ եթէ գալթա-
կանուէրեամբ և վաճառականութեամբ,
ամենահեռագոյն օտարութեան մէջ
թափառած ժամանակ նիւթապէս, բո-
լոր հողով փնտռած է իւր հայրենի
աշխարհն և ամենասերտ յարարերու-
թեան թիւ մը պահեր է միշտ դորձեալ
իւր խանձարոցը մէջ վերահաստա-
տուելու : Տոհմային պատմագրութեան
էջերն լի են այսպիսի գողտրիկ սիրոյ
և սրտաշարժ տեսարանաց գործերով-
սակայն մենք օրինակի համար երեք
դէպք միայն յիշենք աստ, քաջածանօթ
է Արշակոյ Բ՝ Հայաստանի հողին վը-
րոյ ունեցած զարմանալի ազդեցու-
թիւնն, երբ յԱյուշն բերդի և Շապ-
հոյ Բ՝ արքունեաց մէջն էր : Նաև վար-
դանանց պատերազմէն վերջը 'ի խու-
ժաստան դերի դեռացող նախարարա-
կոյտ բազմութեան դէպքն, որոնք իբրև
գիտարայելացիս առ դեռս Բարեխաչոյց
նստած՝ կը յիշէին իրենց քաղցը Հայա-
ստանն և յողուց հանէին : Գարձեալ
Անիէն 'ի Միլոտովալաղիս և 'ի Գրան-
սիլվանիս գաղթող Հայոց մշտամուռնչ

հատաչանքներն դէպ իրենց բնաշխար-
հը : Ո՛վ չի լսեր նոյն իսկ մեր օրերը
հայրենիքէն գուրս բնակող ամեն հայ-
ազգույ սրտառուչ ձայնը, թէպէտ և
մայրենի լեզուն անգամ կորուսած ըլլայ :
Հայք ներկոյ ժամանակիս վիչ տի-
րապետութեանց ենթարկուած լինե-
լով, այսինքն է թուրքիոյ, Ռուսիոյ, Պար-
սից, Աւստրիոյ, Անգղիոյ և Հոլանտայի,
ուստի պէտք ենք աւելի այն աշխարհաց
ազգաբնակութեան մէջ զիտել անոնց
քաղաքային, ուսումնական և բարոյա-
կան գործունէութիւնը :
Մատենագիր՝ դը հմուտ ժե՛ դարու,
կ'ըսէ : « Ամենամեծ տարբերութիւն կոյ
հինաւուրց և այժմեան Հայոց մէջ : Նա՛
աւելի ազատ էր, աւելի քաջասիրտ և
հայրենասէր. իսկ այժմ գէթ մասամբ
անտարբեր, զգուշաւոր և երկչոտ դար-
ձած են օտար ազգաց երկայն և ծանր
ծառայութեան ազդեցութեան տակը ո :
Ստուգիւ ինչպէս ամեն ազգ՝ այսպէս
և Հայն այլևայլ ազգաց արշաւանաց և
անոնց քաղաքային և բարոյական ազ-
դեցութիւններուն ենթարկուելով յըն-
թաց ժամանակաց՝ շատ անգամ կոր-
սընցուցեր է իւր բարոյական, մտաւո-
րական և բնական բարեմասնութիւնը,
և ընդհակառակն անոնց աստերը և
թերութիւնը իրեն սեփականած է :
Սակոյն չենք կրնար չընել թէ միւս կող-
մանէ նա ժամանակին և օտար քաղա-
քականութեան յարմարող և ընդու-
նակ լինելով, անոնց յառաջադիմու-
թեամբն՝ ինքն ևս յառաջադիմած և
ըստ այնմ նորանոր բարեմասնութիւն-
ներ ստացած է, զորս գուցէ յառաջ
չունէր : Քրիստոնեոյ Հայաստանն բար-
բարոս ազգաց խժգժութեանց ենթար-
կուած ժամանակ, իբր ճակատագրա-
կան սկզբամիջ համակրութեան զոհեր
ըրած է : Սակայն շատ անգամ ալ ընդ-
հակառակն այնպիսի զարմանալի քա-
լութեան փորձեր տուած է Պարսից,
Արաբացոց և թաթարաց ժամանակ,
զորս կամ կարելի չէ և կամ հազիւ կա-

1 Եահապարեան. Պատմ. Հայ. էջ 110 :

րէ որ քանիչ ուրիշ ազգի մը պատմութեան մէջ։ Սակայն այս կրկին պարագայից մէջ ևս, կրնայ ըստիլ թէ Հայու գլխին միշտ վառարան եղած է մուսուրական ձրից, ինչպէս սիրան՝ մարգասիրական վեհ՝ գապաննց, ա՛նոր համար ըստ գեղեցիկ պատեհին՝ երկուքով իսկ իւր պատասխան ոգւոյն փորձը տուած է։ Իրանօթ է անշուշտ մերայնոց՝ ժՉ դարէն ցժԻԳ դար հոյ ժողովրդեան Հնդկաստանի մէջ խաղացած դերը. այսպէս նաև ժԻՂ դարուն վերջերն և ՚ի սկիզբն ներկայ դարու՝ մեր Ղարապաղի մէջ կատարուած յեղափոխութիւնն, որ անոնց մուսուրական յառաջխաղացութեան և անձնական արութեան նշանք տուաւ։

Սակայն անոնց ապագայ սերունդէն աւելի՛ Ռուսաց կառավարութիւնն մեծագոյն օգուտներ տեսաւ հոյ զիւցազանց քովարի նահատակութենէն։ Յու մին 1795 Պօղոս Ա կայսեր ծածկագէտ քաղաքավարութեամբն տիրեց Ղարապաղի, Արցախու, Սիւնեայ և Ուտի նահանգներուն, որոնց 200,000 Հոյ բնակիչքն և 100,000 թաթարք և Պարսիք՝ Ռուսիոյ քաղաքական և վաճառականական վերականգանութեանք մէջ՝ մեծ մասն ունեցան։

Ռուսական Հայաստանի 1,250,000 բնակչոց մէջ կրնայ ըստիլ թէ 500,000¹ Հոյք աւելի մեծ ազդեցութիւն ունեցան և ունին քան զայլ տարերս։ Յամին 1828 Ռուսաց՝ Հայաստանի մի մասին տիրելէն յետոյ, բարերար Չարբու համակրութեամբն, մոնաւանդ Աղեքսանդր Բ կայսեր, Հոյք քաղաքային և ուսումնական նոր տապարիղի մը մէջ մտան։ Անոնց մայրենի լեզուին, գրականութեան և ուսումնական յառաջխաղացութեան սկզբնապատճառ եղան ՚ի վեներտիկ Մեծին Մխիթարայ աշակերտաց՝ աննկուն ոգւոյն և բաղկացարգասիք՝ բաղմազանձ դրանքն, և ապա

¹ Ըստ նորատիւ աշխարհագրութեան Աւետար-Յէր-Յակոբեանց 812,000.

² Ըստ Ալեքան. Պ. Երիցեանի. Փորձ, Հինգ. տարի, փետր. երես 110: Իսկ Պերլինի վեհաժոյ.

Լազարեանց համբաւաւոր Ճեմարանը, որ հայութեան հոգւով սկսաւ իւր եռանդուն գործունէութիւնն, յորմէ յամէն 1815 ցամն 1856՝ 600 քովաւ երիտասարակներ գուրս եկան, ըստ վիսյութեան Շահնազարեանի, որոնք բաւական էին զիտութեան լուսոյն հետ հայրենասիրութեան բոցն ևս բորբոքել մնացած հայրենակցաց սրտին մէջ։

Ռուսա-Հոյոց արագ արագ յառաջխաղացութեան առհաւատչեաց են այն ուսումնարաններն, որոնց թիւն յամին 1870ին 40էն մինչև 138 հասաւ. իսկ յետագայ տասն և մի տարուան միջոցին, այսինքն է 1870 թուականէն մինչև ց 1881՝ հոյ վարժարանաց թիւն արգէն 330ի կը հասնէր, յորոց 247 տրական և 83 իրական սեռի կը վերաբերէին։ Իսկ այժմ՝ հերակլեան քոյլերով կը յառաջնն նորս. կովկասի և անդր կովկասի զրեթէ ամեն նահանգաց քաղաքաց և աւանաց մէջ, առաջնակարգ և միջնակարգ ուսումնարաններ, երկսեռ դպրոցներ, ճեմարաններ, ընթերցարաններ, հրապարակական դասախօսութեանց սեղեր, թատերք և ուրիշ արուեստական հիմնարկութիւններ կան։ Ասոնցմէ բաց ՚ի Պեդրպուրիկի, Մոսկուայի և Աժտերխանի բարձրագոյն ուսումնարանային նշանաւորքն են Նախիջևնին, Տփլիսայի, Էջմիածնի, Բէշարաբիոյ, Ղարաբաղի, Շամախուոյ, Բազուի, Ալեքսանդրապոլի և կարս նահանգաց ուսումնարանները։

Ռուսական Հոյք՝ աէրութեան համալսարանաց և բարձրագոյն դպրոցաց մէջ ևս կը յաճախեն։ Բնդհանուր Ռուսաստանի 946,989 Հոյիսրուն² համալսարանաց մէջ թոշակաւոր ուսանողաց թիւը միշտ աւելի է քան ուրիշ ազգաց, և Ռուսաց հետ կը մրցին։ Յամին 1879 Մոսկուայի, Օտեսայի, Խարգովի և Պեդրպուրիկի համալսարանաց մէջ 63 թուականորներէն՝ 14 Հոյք էին և 11 վրա

գովին ներկայացուցած ցուցակն նայելով՝ 1,330,000 Հոյք կան 26,000 քառակուսի քիւերկերի վրայ։

ցիք : իսկ կովկասի փոխարքայութեան միջնակարգ ուսումնարանաց մէջ, որոնք բոլորովին կամ մասամբ համալսարանաց համար կը պատրաստուին, ընդ ամենն 7,367 ուսանողք, յորոց 4,286 հոգի Ռուսք են, 1,303 Հայք, Վրացիք 947, իսկ մնացած 821՝ այլ և այլ ազգերէ :

Համալսարանաց՝ և մասնադիտական բարձրագոյն ուսումնարանաց մէջ եւ զոյլ 129 արքունական թոշակաւորներէն 27 հոգի կամ մօտ 21% Հայերն էին, մինչդեռ միջնակարգ ուսումնարանաց մէջ պատրաստուածներուն թըւոյն համեմատ (18%) պիտի լինէին մօտ 23 հոգի : Վրացիք էին 12 հոգի կամ մօտ 9%, մինչդեռ (13%) մօտ 17 հոգի պիտի ըլլային : իսկ Ռուսք և ուրիշ այլ ազգերի միասին՝ էին 90 հոգի կամ մօտ 70%, մինչդեռ պիտի ըլլային (69%) մօտ 89³/₄ հոգի : Ռուսներն աստի կը հետեի թէ Ռուսք և այլ և այլ ազգու թիւնք այնքան են արքունական թոշակաւորք, որքան որ բնականաբար իրաւունք ունէին. իսկ մնացած երկու ազգութեց մէջ Հայք յառաջադէմ են քան զՎիրս, այսինքն փոխանակ 23ի՝ 27 են : իսկ նոքա փոխանակ 17ի՝ 12 են : Ռուսներն այս իրողութեանս եզրակացու թիւնն յայտնի է թէ ամենալաւ ուսանողներէն՝ Հայք են միշտ մեծամասնութիւն կազմողներ :

Ի նկատի ունելով այն բարձրագոյն ուսումնարաններէն և համալսարաններէն ելած իրաւագէտները, բժիշկները, մասնագէտները, մատենագիրները փաստաբանները, դատաւորները, քաղաքագէտները և զինուորական մեծամեծ հայ հանճարքը, կ'ըսենք, թէ մեր հայրենիքէն գատ՝ նաև Ռուսաց ակրութեան մատուցած անոնց ծառայութիւնքը աշխարհի ծանօթ են : Արդարև չէ մարթ հայեացք մը ձգել վերջին ժամանակի Ռուսաց պատմութեան վրայ և ակնյայտնի չաեսնել՝ անոր քողաքական յառաջադիմութեան և աշխարհակալութեանց մէջ Հայոց խաղացած դերը : Ղազար Քրիստապիտով և իւսև իւզպաչի Մեծին Պետրոսի քաջարի զօ-

րապետներէն էին . վերջնոյն համար կ'ըսուի՝ թէ 1722ին պատերազմի ժամանակ միոյն հայախումբ ջոկատի մը կը հրամայէր : Ղազար Նազարովիչ՝ Լազարեան մեծ տոհմէն . Աւագ Խաւս, որ Ղարաբաղի իշխողաց մին էր, բայց յետոյ Ռուսաց բանակն անցաւ . Իւսև (Յովհանն.) Լազարիեւ, որ յամին 1856 տէրութեան խորհրդարանի անդամ էր. Իւսև Արամեւիք Բ, իշխան և զօրավար հետեակազօրաց, կառավարիչ նաւարանին Պէդրպուրի և Գիէվի : Յամին 1812էն մինչև 1814 Ռուսաց Գաղղիոյ հետ ունեցած մեծ պատերազմին մէջ շատ նշանաւոր հանդիսացան Դուռիք Դիլաւնով, իշխանն Արամեւիք Ա, և Մելիքեան զօրավարներն : իսկ յամէն 1809 մինչև յամին 1812 Թիւրքիոյ դէմ եղած պատերազմին մէջ անուանի եղաւ իշխանն Մալուկ-Պէյ, խորհրդատու տէրութիւն : Յամին 1856 Քրիստապիտ Լազարիեւ և Իւր եղբայրն Իւսև էին խորհրդատու սենեկապետք Տէրութեան : Յամին 1854 պատերազմի ժամանակ Ասիոյ զօրաց հրամանատարն էր հանրածանօթ հայագգի իշխանն Քնուրչով, և անոր ազգակից և զորակից իշխաններն Արուսթեանիկի-Դոյսիւրուկի և Մատաբով : վերջին պատերազմին ժամանակ, այսինքն յամին 1878, Դանուբի և մասնաւորապէս Ասիական բանակաց զօրավարաց և զնդապետներուն մեծագոյն մասն Հայք էին : Ասիոյ Տրաքիաստանի մէջ Ռուսական բանակաց որ և է յաղթութեան և աշողելոյ հետ սերտի կապուած են այս անմահանուն և քաջ զօրապետաց անուանքն, որք են Շուկովիկով, Լազարիեւ, Տէր Գուկաւով և Լուիս Մելչիքով : Այս մեծագոյն հանճարս, ինչպէս յայտնի է, ոչ միայն անուանի եղաւ Իրքի զօրավար՝ Տաղստանի, Ալվի-Արայ և Կարապ պատերազմներով՝ այլ և պայծառ փայլեցաւ և պիտի փայլի Ռուսիոյ վարութեան հարիզոնին վրայ՝ իւր խորին քաղաքագիտութեամբն : Նա միայն 72 միլիոն գլուխներու մէջ արժանի եղաւ զիկաատարութե գերագոյն պաշ-

տաման . և որքան մնաց նա իւր բարձր
 և ամենագեղար պաշտամանը մէջ ,
 ապառեց զէթ սա ժամն զՌուսիա յՈւ-
 չրնչականութեան զարհուրելի խառ-
 նագազանէն , որ յասանին և յորքու-
 նիս անգամ բունեալ էր , և կ'ուտէր
 Ռուսիոյ սիրաը , և 'ի մտայ մահ կը
 սպասեար Ռուսաստանի : Նա ինքն զե-
 ղեցիկ ազատութեան ապագայ մ'էս
 կ'ուտեէր Ռուսիոյ , եթէ քաղաքագի-
 տաց և դրանկաց տեսութիւնք և բմ-
 բրոմունք զինքը չհրաժարեցնէին իւր
 իշխանութենէն : Այս մեծ գորապետիս
 յաջորդելու նորանոր շառաւիղներ ևս
 կան այսօր 'ի Ռուսա—Հոյս և կը յուսանք
 թէ պիտի երնն անընդհատ :

Գարձններ վայրիկ մ'ես տեսութիւն-
 նիս Տաճկա—Հայաստանի վրայ : Տաճ-
 կա—Հայաստանի մեր եղբարքն 'ի սկզբ-
 բան զուրկ ըլլալով զինուորական և քա-
 ղաքային իրաւունքներէն , գողցես բա-
 լրութիւն երկրագործութեամբ , վաճա-
 ռականութեամբ , գործակալութեամբ
 և արուեստիւք կը պարապէին : Ասիոյ
 Տաճկաստանի ցամաքային վաճառակա-
 նութիւնը մասամբ մը Հոյսոյ ձեռքովը
 կը զաւնար , որնք իւրապայի մէջ ևս
 Յունաց հետ կը միջին : Արքունի գան-
 ձապետութեան , համարակալութեան ,
 դրամահատութեան , վառօղակարծու-
 թեան , և գորգ և մետաքս անկանելու
 արուեստներն զրեթէ բացարձակ Հա-
 յոց ձեռքով կը կատարուէին . այսպէս
 նաև աստղձագործութեան , զինագոր-
 ծութեան և մեքենականութեան գոր-
 ծօղութիւնք : Արքունական ապարաննե-
 րէն սկսեալ , որոնց ճարտարապետն էր
 կարապետ Գոյֆան . նաև համբուուար
 սկեքիւք , չքնաղ զարդուց վաճառողք
 և փորագրողք , սպիտակազարդք , և
 քանդակողք և Պոլսոյ Հոյսք էին :

Այ միայն Հոյսոյ այլ և Տաճկաց եր-
 կաթի դարու մէջ անգամ՝ չդադրե-
 յաւ Հայաստան ընծայել հանճարեղ և
 մեծանուն ամիրաներ , որոնք ամենազգի
 ծառայութեամբք և իոհական խորհրդ-
 դով Տաճկաստանի բարենորոգութեան
 համար զանձինս նուիրեցին : Մշտըն .

Յեհուար յիշատակաց արժանի են Տիւ-
 վեանք , որք զանձատան վարչութեան
 կը պարապէին . Տարեանք՝ վառօղա-
 գործաւթեան , և ամենէն նշանաւորսն
 զանապաճառներն էին կարապետ և
 Գեւորգ եղբարք : Կարապետ Գալֆան՝
 Սուլթանի ճարտարապետն էր և տէրու-
 թեան ներքին դործոց պաշտօնեայ : Ե-
 յաւեան Ալլաովերտի—Սոլու , Ճէզաիւ-
 լիսն Պետրոս , Գեւորգ Խորաւաննեան ,
 Մաքսուտ , Ճանիկ , Միսակեան , Թըն-
 կիւր և Պարտիկպանեան՝ Եգիպտոսի
 փոխարքայութեան գրամատիոնք էին :
 Սակայն ամենէն նշանաւոր և ամեն ազ-
 գայ ծանօթ և սիրելի էր պաշտօնեայն
 և կուսավարիչն գրամատութեան պը-
 ժարանին Սուլթան Մահմուտի՝ Գազեզ
 Յարութիւն : Այս մեծախելք մեծախրտ
 ամիրան և Պոլսոյ մէջ և այլուր շատ ե-
 կեղեցիներ կանգնեց Հոյսոց և Յունաց
 համար , ուսումնարաններ , հիւանդա-
 նոցներ և որբանոցներ . և իբրև նոր
 սմն Մեկինաս հայ գրականութեան և
 ուսումնական ասպարիզին մէջ մեծա-
 պէս նպաստեց՝ բազմաթիւ երկատիրու-
 թիւններ հրատարակել տալով : Յիսուն
 տարի առաջ , միջին գարու պէս զազգա-
 յին զպրութիւնս և զիտութիւնս Հոյսոց
 վաճից մէջ միայն կարելի էր որոնել ,
 իսկ այժմ՝ փոքր 'ի շատէ ամեն տեղ և
 բազմաթիւ անձանց քով : Ինչպէս Հոյ
 ազգարնակութեան՝ այսպէս նաև հա-
 յիւրէն գրականութեան և յառաջագի-
 մութեան վառարաններն Տաճկաստա-
 նի մէջ՝ և Պոլսի և Զմիւռնիա են :

Ապախ Մէճիտի դահակալութեան
 վերջի տարիներէն սկսան Տաճկա—Հա-
 յոց յառաջխաղացութեան քայլերն :
 Յամին 1866 միայն և Պոլսոյ մէջ 32
 մանչերու դպրոցներ կային և 14՝ աղ-
 ջիկներու , որոնց մէջ 6000էն աւելի
 ուսանողք կային , այսինքն 4700 տը-
 զոյք և 1472 աղլիուք : Մ'ւր թողունք
 ապա փրոճն Ասիոյ և Հոյսոյ Մեծաց
 բազմաթիւ քաղաքաց և նահանգաց
 ուսումնարաններն , յորս 34,000էն ա-
 ւելի ուսանողք կային , և անպակաս քա-
 ղաքական անձինք ևս կ'եղէին :

Թէպէտ և ըստ տոնճկահոն օրինաց քաղաքային և զինուորական գործոց մէջ մտնելու իրաւունք չունէին այլասեր Ժողովուրդք, սակայն Հայոց համակրութիւնն և հանճարն և գովելի հուստարմութիւն առ բարերար Սուլթանն՝ այս խտրոցն ևս վերցրնել տուաւ։ Այսօր Տէրութեան գործոց պաշտօնէիցմէ կան և Հոյք, Օտեան և Չասիլ Էֆէնտիներ, կան գործեալ Հայ փաստաբաններ, պատգամաւորք, հիւպոտք, խորհրդարանի անդամներ, փաշաներ, պէյեր և Տէրութեան այլ և այլ գործոց պաշտօնեայք ։

Այսպէս նաև Եգիպտոս՝ իւր փոխարքայութեան սկիզբէն ՚ի վեր, այսինքն Մէհմէտ-Ալի փաշային օրէն, ունեցաւ իւր առաջին պաշտօնեայն (արտաքին գործոց) զՊոդոս-Պէյ-իւսուֆ, որ իւր բարձր քաղաքատեսութեամբ մեծաւ մեծ ծառայութիւններ մատուցց, մանաւանդ յամէն 1833 մինչև ց1840 եղած պատերազմի խռովայող ժամանակաւ միջոցին։ Այս բարձրապատիւ պաշտաւ մանը մէջ յաջորդեցին ապա անոր երկու արժանաւոր ազգակիցք՝ Ստեփան պէյև և Նուպար փաշա, որոնք գաղղիական քաղաքատեսութիւն վարեցին զԵգիպտոս, արքունի գունձը կարգի գրին և երկիրը աշխարհայինութեամբ և երկրագործութիւն բարգաւաճեցին։ Վերջոյն հրաժարականն՝ Եգիպտոսի համար մեծ հարուած եղաւ։ Այնուհետև կորսնցուցց Եգիպտոս իւր առանձնաշնորհութիւնը, և օտար տէրութեանց՝ այսինքն Անգղիոյ և Գաղղիոյ ազդեցութեանը ենթարկուեցաւ, կորսնցընելով քիչ շատ իւր բարօրութիւնը։ յաջորդեցին ետքը վրդովմունք և սնուիրմաւերմունք արց և հրց յԱղեքսանդրիա և ՚ի շրջակայս ։

Պարսկաստանի Հայք ևս, որոնց թիւըն 150,000էն մինչև 180,000 կը հասնի, համեմատութեամբ Տաճկաստանի և ռուսիաբնակ Հայոց շատ յետամնաց են. սակայն պահած լինելով ազգային լեզուն և հայրենաւանդ սովորութիւնքը, տեղայնի այլաստարր ազգաբնակու-

թեանց հետ համեմատելով կրնան վերադաս համարուիլ, մանաւանդ որդի երիտասարդութիւնն՝ որ կը յաճախէ ՚ի Ռուսիա և յԵւրոպա։ Նոքա ևս բազմաթիւ հանճարներ ընծայեցին Պարսից տէրութեան այս դարուս մէջ, յորս հաստարապէս փայլեցաւ բնածին հանճար և ուշիմութիւն. և են Մանուչար խան, Խուրով խան, Սէքի խան, Առազ խան, Սիւլէյման խան, Յարուքիւն խան, Էնսկոյորով խան և Գաւիթ խան, որոնք այն տէրութեան թէքաղաքային, թէ զինուորական և թէ քանապական յառաջադիմութեանը մեծապէս նպաստամատուց եղան։ Այսօր իսկ քաջածնօթ է Միրզա Մելգուն խան իւր իմաստուն և լուսաւոր գործօնէութեամբն ։ Պարսից Շահի և իւր յառաջադիմութեան սիրող իշխանին արտօնութեամբն և նպաստիք՝ մեծ շարժումն մը կը տեսնենք դէպ ՚ի քաղաքականութիւն. ազգասիրութեան և զրականական ոգին արթնցեր է, մասնաւորապէս հնոյն Հայաստանի Ատրպատական նահանգի մայրաքաղաքին (Դասիքէթի) մէջ և ՚ի Սպահան ։

Անգղիոյ հպատակ՝ այսինքն Հնդկաստանի, Հոլանտայի (Ճաւայի), և Աւստրիոյ Հայերն՝ թէպէտ և սակաւաթիւ, բայց իրենց մնացած ազգակիցներէն աւելի յառաջադէմ են և եւրոպական դասակարգութեամբ քաղաքակիրթ ։ Այլ ազգային լեզուին և հայ գրականութեան մասին՝ պէտք ենք ցաւով որտի բսել, թէ շատ աւաղելի գրից մէջ են և կորսուելու սպառնական վիճակը մեզի կը ներկայացընեն։ Միակ միջոց և դարման այսպիսի աղետալի կորստեան մը գիմայն առնելու՝ է ազգասիրական և հայրենասիրութեան ոգին, որ այժմ առհասարակ արթնցած լինելով, կը յուսանք թէ մայրենի լեզուն ևս փութով վերկենցաղի անոնց մէջ ։

Արեւմտ մինչև ցարգ ըրած համառօտ տեսութիւննրա եզրակացընելու համար պէտք ենք բսել թէ համաշխարհի Հայ յարեան կնդրոնացումն այսօր այնպիսի յառաջխաղացութեան ղեղեկիկ և-

րևոյթներ կը ներկայացընէ , որ Ասիոյ կազմակերպեալ և անկախ սոցալայ ան- գամ՝ նախանձելի կրնայ լինել , և այ- սու ցոյց կու տայ՝ որ երախտաւոր է իւր գոյութեան և յառաջագիմութեան նը- կատմամբ առ վեհապատ Սուլթանն , ուրոնց մինչև ցայսօր արդարատէր վարչութեան մեծագոյն բարիքն և համա- կրութիւնը կը վայելէ :

Այս՝ բարեխնամ և խաղաղատէր կառավարութեանն արդիւնք է , ինչպէս Տաճկաստանի ամեն ժողովրդոց , այսպէս նաև Հայոց մէջ գիտութեանց զարգացումն , որո վօրէ օր 'ի լոյս կու գան նորանոր մասեանք , ուսումնալթերթք , օրագիրք և պատկերազարդ հրատարակութիւնք : Միայն 'ի Կ.Պօլսա ՅՍԻ չափ հայ լրագիրներ կան , մէկդի թողլով յիշելու նաև Ռուսահայոց մէջ 'ի Տիգրիս և 'ի Զմիւռնիա երկեցած անընդհատ հանգիստարաններ , պարբերականներ , երկրագործական և բժշկական կամ առողջապահական թերթեր և հասարակաց դասախօսութիւնք :

Իրողական պատմագրոց պարագլուխ հանճարներէն մին , Էհսար Գանգու , իւր տիեզերական պատմութիւնը գրած ժամանակ , ըսած էր՝ թէ Տաճկաստանի մէջ յառաջագիմութիւն սիրող և քաղաքականութեան ձևաող տարրն՝ Հայ ժողովուրդն է , որուն գեղեցիկ ընթացքն՝ գեղեցկագոյն սպագոյ մը կ'աւետէ : Ի՞նչ պիտի բւեր արդեօք թէ այժմ գրած ըլլար նա իւր երկասիրութիւնը : Այս լուսաւոր հանճար որչափ որ հեռուէն նկատեց զՀայն , նոյնչափ ևս՝ շուտ մտեցաւ անոր զարդացման ասպարէզը , որ անհրաժեշտ արդասիք մ'էր Հայ ազգին խաղաղ վիճակին Տաճկաստանի հովանոյն տակ :

Ըսենք Տուրքի թմրիկեան քարոզչին խօսքերը . « Ամեն սեղ ուր Հայք կը գանուին , ճարպիկ և բանխոսն մարդիկ են . ըստ հասարակ կարծեաց՝ նաքա հասարակ խելքի տէր մարդիկ չեն : Տաճկաստանի մէջ աւելի բարձր հան-

դիսացեր են իրենց առհորական գործունէութեամբք և դէպ 'ի միքենականութիւն ցուցած մեծ ընդունակութիւններովը : Փյխաւոր վաճառականներն՝ Հայք են՝ ինչպէս մեծ սեղանաւորքն . և զուք կրնաք համոզուիլ թէ նքս են պարագլուխ ամեն մի նոր ձեռնարկութեան , որ մասնագիտական պատաստութիւն կը պահանջէ : Հայք Տաճկի հաստաամսութեան հետ ունին և Յոյնն նուրբ և թափանցիկ միտքը : Միով բանիւ , Հայք Արևելքի Անկլո-Սլաւոնացիք են » :

Պ . Տիւլօրիէ հայագէտն՝ Լամարգիների կարծեացը դէմ այսպէս կը յայտնէ իւր տա Հայ ազգն ունեցած մեծագոյն վարկըն և համակրութիւնը . « Ելբսն թէ Հայք Արևելքի մէջ նոյն են՝ ինչ որ են Զուիցերացիք յԱրևմուտա . սակայն աւելի ճիշտ կ'ըլլայ Հոլանտացոյ հետ համեմատել զանոնք : Անոնց մէջ կը նըկատուի նոյն յարատև բոյց հանգիստ գործունէութիւնը , նոյն ձկտուժը հարստութիւն ձեռք բերելու համար , նոյն արհամարհանքն առ արտաքին փայլաբոյր անոնց յառաջագիմութիւնքն՝ որք կը կատարուին անկորրութեան մէջ՝ անյայտ են Եւրոպիոյ , ուր չեն հասնիր նոցա դրբերն և պարբերական հրատարակութիւնք » : Այսպէս կը դրուատեն Պ . Օլիվիէ իւր ճանապարհորդութեան եռահատոր գրոց մէջ , և Պ . Գամբան , որ Գաղղիոյ դեսպան էր 'ի Տիգրիս :

Երկրորդ չըջանն կը սկսի մեր փորձրիկ Զէյթունի անցքերէն և կը հասնի մինչև Ռուսա-տաճկական պատերազմը : Այս միջոցիս Եւրոպիոյ տէրութեց հայեցուածոց մէջ քաղաքավարչական տեսակէտ կը նշմարուի , զոր նկատել տուաւ Ռուսիոյ բռնած ընթացքն :

Հայոց երրորդ չըջանն , այն օրէն սկըսաւ կրննալ քաղաքավարչութեան հորիզոնի վրայ , երբ Ս . Ստեփանոսի դաշնադրութեանը մէջ դրուեցաւ Յ 1րդ յօդուածն